ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ

---

20 մարտ 2025թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08/04
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Զարինե Ղամբարյանը, Հասմիկ Վարդանյանը, Նարեկ Ալիխանյանը, Սուրեն Մելիքյանը, Վարդան Ավագյանը, Նունե Սանթրոսյանը, Շուշանիկ Սահակյանը, Արման Խաչատրյանը

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u>
Նոնա Գրիգորյան, Ադամ Սարգսյան, Աշխեն Ամիրխանյան, Մխիթար Հովհաննիսյան, Հովհաննես Նաղդալյան, Գեվորգ Ամիրխանյան, Գագիկ Շահնազարյան, Լամարա Մանթաշյան, Արմինե Աղաջանյան, Լիպարիտ Սանթրոսյան

<u>Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դավիթ Սարգսյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր ՝ Սոնա Եգանյանը</u>

Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնների մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված, առաջին անգամ համայնքային ծառայության պաշտոնում նշանակված համայնքային ծառայողներ Գրիգոր Հովհաննիսյանը, Հայրապետ Մարգարյանը, Շավարշ Գրիգորյանը համայնքի ավագանու անդամների և համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչների ներկայությամբ՝ համաձայն <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 16-րդ հոդվածի պահանջների, հանդիսավոր կերպով ընթերցեցին երդման տեքստը:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջան համայնքի ավագանու անդամ Արման Աշոտի Խաչատրյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
2. Գույքի օտարման մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
3. Դիլիջան համայնքի ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատանքային ռեժիմը և հաստատությունում երեխաների մնալու տևողությունը սահմանելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
4. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց թիվ 22/6 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 20. 3քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
5. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 185/9 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 25. 2քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
6. Դիլիջան համայնքի ավագանու 2025թ. փետրվարի 18-ի թիվ 865-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
7. Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող մի շարք ծածկագրով հողամասեր Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
8. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2025 թվականի տեղական բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
9. Դիլիջան քաղաքի Մյասնիկյան 66 հասցեի 2 աշխատասենյակների՝ ընդհանուր 45,4 քմ տարածքով, «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի անհատույց օգտագործման ժամկետը երկարաձգելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
10. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2025 թվականի տեղական բյուջեի վարչական մասում փոփոխություն կատարելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
11. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2025 թվականի տեղական բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
12. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 179/10 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 20. 1քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
13. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2025 թվականի տեղական բյուջեի ֆոնդային մասում փոփոխություններ կատարելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան

14. Արտոնություն սահմանելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
15. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման 2024 թվականի փաստաթղթերը հաստատելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
16. Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
17. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ավագանու 15 նոյեմբերի 2024 թվականի թիվ 794-Ա որոշման թիվ 17 հավելվածում փոփոխություն և լրացում կատարելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
18. Դիլիջան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 891-Ա)*

Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին օրենքի» 70-րդ հոդվածի պահանջներին համապատասխան հրապարակեց համայնքի ավագանու «Ապրելու Երկիր» խմբակցության անդամ Արման Աշոտի Խաչատրյանի՝ ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին դիմումը:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Դիլիջան համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել՝ Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոցի թիվ 67 շենքի թիվ 9, երեք սենյականոց բնակարանն, ուղղակի վաճառքի միջոցով, վարձակալ Գառնիկ Հայկազի Մելքոնյանի ընտանիքին օտարելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող, Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոցի թիվ 67 շենքի թիվ 9, երեք սենյականոց՝ 75,21ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալ Գառնիկ Հայկազի Մելքոնյանի ընտանիքին, ուղղակի վաճառքի միջոցով, 112815 դրամ արժեքով (մեկ քառակուսի մետրի համար սահմանված է 1500 դրամ) օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 892-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՆԱԼՈՒ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 5-ի 12-Լ, 13-Լ, 14-Լ, 15-Լ, 16-Լ, 17-Լ հրամանները.

Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական հաստատություններում սահմանել աշխատակարգ 5-օրյա աշխատանքային ռեժիմ՝ երկուշաբթիից–ուրբաթ: Աշխատանքային օրվա սկիզբը սահմանելով 8:30–ը, աշխատանքային օրվա ավարտը՝ 17:30–ը, ընդմիջում՝ 13-:00-14:00–ն(տեղում):

Հաստատությունում երեխաների մնալու տևողությունը՝ երկուշաբթիից–ուրբաթ՝ ժամը 08:30-17:30-ը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 893-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՈԼԴՈՎԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 22/6 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 20. ՅՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. մարտի 04-ի թիվ 340-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց, թիվ 22/6 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Հրաչիկ Արշալույսի Առաքելյանի կողմից ինքնակամ կառուցված 20. 3քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 12022025-11-0030/: Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Հրաչիկ Առաքելյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց, թիվ 22/6 հասցեի ավտոտնակը՝

20. 3քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 20. 3քմ հողամասը, համապատասխանաբար, 47015 դրամ և 138737 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 20. 3քմ հողամասը քաղ. Հրաչիկ Արշալույսի Առաքելյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց, թիվ 22/6 հասցեի ավտոտնակը՝ 20. 3քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 20. 3քմ հողամասը, համապատասխանաբար, 47015 դրամ և 138737 դրամ արժեքներով քաղ. Հրաչիկ Արշալույսի Առաքելյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 894-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 185/9 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 25. 2ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. հունվարի 19-ի թիվ 101-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց, թիվ 185/9 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Մանյա Սեյրանի Խոջոյանի կողմից ինքնակամ կառուցված 25. 2քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 05032025-11-0044/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Մանյա Սեյրանի Խոջոյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց, թիվ 185/9 հասցեի ավտոտնակը՝ 25. 2քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 25. 2քմ հողամասը, համապատասխանաբար, 68670 դրամ և 264948 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 25. 2քմ հողամասը քաղ. Մանյա Սեյրանի Խոջոյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց, թիվ 185/9 հասցեի ավտոտնակը՝ 25. 2քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած

25. 2քմ հողամասը, համապատասխանաբար, 68670 դրամ և 264948 դրամ արժեքներով քաղ. Մանյա Սեյրանի Խոջոյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 895-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 865-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Ի փոփոխումն Դիլիջան համայնքի ավագանու 2025թ. փետրվարի 18-ի «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Այգեստան փողոց թիվ 2/21 հասցեի տնտեսական շինությունը և վերջինիս զբաղեցրած 41. 3քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին» թիվ 865-Ա որոշման և ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջան համայնքի ավագանու 2025թ. փետրվարի 18-ի «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Այգեստան փողոց թիվ 2/21 հասցեի տնտեսական շինությունը և վերջինիս զբաղեցրած 41. 3քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին» թիվ 865-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն, մասնավորապես՝ «95651 դրամ» արժեքը փոխարինել «191302 դրամով»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 896-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՖՈՆԴՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի կադաստրային քարտեզի՝

- 11-003-0142-0024 կադաստրային ծածկագրով 380.19քմ հողամասը,
- 11-003-0172-0025 կադաստրային ծածկագրով 640.0քմ հողամասը,
- 11-003-0174-0044 կադաստրային ծածկագրով 105.9քմ հողամասը,
- 11-003-0310-0022 կադաստրային ծածկագրով 79.86քմ հողամասը,
- 11-003-0110-0125 կադաստրային ծածկագրով 21.1քմ հողամասը,
- 11-003-0097-0012 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 284.1քմ հողամասը,
- 11-003-0056-0001 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 314.5քմ հողամասը,
- 11-003-0090-0047 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 50.0քմ հողամասը,
- 11-003-0052-0056 և 11-003-0052-0069 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 190.9քմ հողամասը,
- 11-003-0340-0004 և 11-003-0340-0006 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 33.2քմ հողամասը,

համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված են որպես ֆիզիկական անձանց սեփականություն:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի կադաստրային քարտեզի՝

- 11-003-0142-0024 կադաստրային ծածկագրով 380.19քմ հողամասը,
- 11-003-0172-0025 կադաստրային ծածկագրով 640.0քմ հողամասը,
- 11-003-0174-0044 կադաստրային ծածկագրով 105.9քմ հողամասը,
- 11-003-0310-0022 կադաստրային ծածկագրով 79.86քմ հողամասը,
- 11-003-0110-0125 կադաստրային ծածկագրով 21.1քմ հողամասը,
- 11-003-0097-0012 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 284.1քմ հողամասը,
- 11-003-0056-0001 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 314.5քմ հողամասը,
- 11-003-0090-0047 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 50.0քմ հողամասը,
- 11-003-0052-0056 և 11-003-0052-0069 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 190.9քմ հողամասը,
- 11-003-0340-0004 և 11-003-0340-0006 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 33.2քմ հողամասը,

որոնք համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված են որպես ֆիզիկական անձի սեփականություն, ընդգրկել Դիլիջան համայնքի հողերի ֆոնդում, որպես Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հողեր:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 897-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Համաձայն Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի միջև կնքված սուբվենցիայի հատկացման 20.02.2025թ. թիվ 2 պայմանագրի, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքին հատկացվել է 2832.5 հազար (երկու միլիոն ութ հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար՝ Դիլիջան համայնքի երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով տարեկան թվով 13 աշակերտի համար ուսուցման ծախսերի փոխհատուցման նպատակով : Ելնելով վերոգրյալից անհրաժեշտ է նշված գումարը ճանաչել որպես եկամուտ և ճանաչել ծախս /Արտադպրոցական դաստիարակություն/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգմամբ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33 -րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքին հատկացված 2832.5 հազար (երկու միլիոն ութ հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարը ճանաչել որպես եկամուտ /պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ՝ 900405051138 հաշվեհամարին/:

2. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքին հատկացված 2832.5 հազար (երկու միլիոն ութ հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարը ճանաչել ծախս Դիլիջան համայնք /Արտադպրոցական դաստիարակություն/ «09-05-01» բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվին՝ հոդված 4511 /սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին/:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 898-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ 66 ՀԱՍՑԵԻ 2 ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ 45,4 ՔՄ ՏԱՐԱԾՔՈՎ, «ՍՕՍ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող ք. Դիլիջան, Մյասնիկյան 66 հասցեի վարչական շենքի 4-րդ հարկի թիվ 24 և 25 աշխատասենյակները՝ ընդհանուր 45,4 քմ տարածքով Դիլիջան համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 7-ի թիվ 070-Ա որոշմամբ անհատույց օգտագործման (փոխատվության) է հանձնվել «ՍՕՍ Մանկական Գյուղեր» Հայկական բարեգործական հիմնադրամին՝ 3 տարի ժամկետով: Հիմնադրամի տնօրենը խնդրել է երկարաձգել աշխատասենյակների անհատույց օգտագործման ժամկետը մինչև 2028 թվականը՝ «Ընտանիքի ամրապնդման

շարժական աջակցության տրամադրում Տավուշի մարզի խոցելի երեխաներին, երիտասարդներին և իրենց ընտանիքներին, այդ թվում՝ տեղահանված բնակչությանը» և «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց տնտեսական հզորացում» ծրագրերի իրականացման համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող ք. Դիլիջան, Մյասնիկյան 66 հասցեի վարչական շենքի 4-րդ հարկի թիվ 24 և 25 աշխատասենյակների՝ ընդհանուր 45,4 քառ. մետր տարածքով, անհատույց օգտագործման (փոխատվության) ժամկետը երկարաձգելու մինչև 2028 թվականը՝ «Ընտանիքի ամրապնդման շարժական աջակցության տրամադրում Տավուշի մարզի խոցելի երեխաներին, երիտասարդներին և իրենց ընտանիքներին, այդ թվում՝ տեղահանված բնակչությանը» և «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց տնտեսական հզորացում» ծրագրերի իրականացման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 899-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Համաձայն ՀՀ կառավարության 27.12.2024թ. թիվ 2060-Ն որոշման, Դիլիջան համայնքի և Տավուշի մարզպետի աշխատակազմի միջև 26.02.2025թ. կնքված թիվ ԴՄ-ԴԵԴ-2025 պայմանագրի Դիլիջան համայնքին հատկացվել է 1 243 300 (մեկ միլիոն երկու հարյուր քառասուներեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամ՝ արտադպրոցական հաստատություններում դասավանդող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման արդյունքում ատեստավորված մանկավարժներին լրավճար վճարելու նպատակով: Ելնելով վերոգրյալից անհրաժեշտ է վերը նշված գումարը ճանաչել եկամուտ և ծախս:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33 -րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքին հատկացված 1 243 300 (մեկ միլիոն երկու հարյուր քառասուներեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումարը ճանաչել որպես եկամուտ:

2. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքին հատկացված 1 243 300 (մեկ միլիոն երկու հարյուր քառասուներեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումարը ճանաչել ծախս՝ «09-05-01» Դիլիջան համայնք /Արտադպրոցական դաստիարակություն/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվի՝ 4729 /Այլ նպաստներ բյուջեից/ հոդվածով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 900-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Համաձայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի միջև կնքված 24.02.2025թ. թիվ 23 պայմանագրի, պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման նպատակով Դիլիջանի համայնքապետարանին հատկացվել է 1,999.0 հազ. ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասով, 36-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1.Դիլիջան համայնքի բյուջեի «Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ» եկամտային հաշվին ավելացնել 1999.0 հազ. ՀՀ դրամ:

2. 01-03-03 «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» գործառնական դասակարգման ծախսերի կատարման նախահաշվի 4111 /Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ/ ծախսային հոդվածին ավելացնել 1999.0 հազ. ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 901-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 179/10 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 20.1ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. դեկտեմբերի 05-ի թիվ 1280-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց, թիվ 179/10 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում (հողամասը ընդհանուր բաժնային սեփականություն է 2-րդ հարկի սեփականատիրոջ հետ) քաղ. Արմեն Վիկտորի Հովհաննիսյանի կողմից ինքնակամ կառուցված 20.1քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 07032025-11-0009/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Արմեն Հովհաննիսյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց, թիվ 179/10 հասցեի ավտոտնակը՝ 20.1քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 20.1քմ հողամասը (հողամասի 1/2 մասը) համապատասխանաբար, 54773 դրամ և 105664 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 20.1քմ հողամասը (հողամասը ընդհանուր բաժնային սեփականություն է 2-րդ հարկի սեփականատիրոջ հետ) քաղ. Արմեն Վիկտորի Հովհաննիսյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց, թիվ 179/10 հասցեի ավտոտնակը՝ 20.1քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 20.1քմ հողամասը (հողամասը ընդհանուր բաժնային սեփականություն է 2-րդ հարկի սեփականատիրոջ հետ) համապատասխանաբար, 54773 դրամ և 105664 դրամ արժեքներով քաղ. Արմեն Վիկտորի Հովհաննիսյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 902-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33 -րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. «06-02-01» Դիլիջան համայնք /Համայնքային զարգացում/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվի 5112 /շենքերի և շինությունների կառուցում/ տնտեսագիտական հոդվածից նվազեցնել՝ 20 000 000 ՀՀ դրամ:

2. «08-02-03» Դիլիջան համայնք /Մշակույթի տներ, ակումբներ/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվի 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածին ավելացնել՝ 7 000 000 ՀՀ դրամ, 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին՝ 2 000 000 ՀՀ դրամ:

3. «08-01-01» Դիլիջան համայնք /Սպորտային գոտիների և մարզական կենտրոնների կառուցում/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվի 5112 /շենքերի և շինությունների կառուցում/ տնտեսագիտական հոդվածին ավելացնել՝ 5 000 000 ՀՀ դրամ, 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածին ավելացնել՝ 100 000 ՀՀ դրամ, 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին՝ 2 400 000 ՀՀ դրամ:

4. «04-05-01» Դիլիջան համայնք /Ճանապարհային տրանսպորտ/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվի 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածին ավելացնել՝ 2 000 000 ՀՀ դրամ, 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին՝ 1 500 000 ՀՀ դրամ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 903-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Դիլիջան համայնքի ղեկավարին են դիմել քաղաքացիներ՝ Հայկուշ Պապյանը, Սերժիկ Գազարյանը, Նինա Մանուչարյանը, Ալբերտ Վարդանյանը, Սամվել Խաչատրյանը, Գոհար Պոստոլոկյանը, Դուշիկ Բաբաջանյանը և «Դիլիջան քաղաքի համար 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը սեփականության իրավունքով իրենց պատկանող փոխադրամիջոցների գույքահարկի և անշարժ գույքի հարկի պարտավորությունների մասով արտոնություն սահմանելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Հարկային օրենսգրքի» 230-րդ հոդվածի 3-րդ

մասի, 245-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ **Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.**

1.Քաղաքացիներ՝ Հայկուշ Պապյանին, Սերժիկ Գազարյանին, Նինա Մանուչարյանին, Ալբերտ Վարդանյանին, Սամվել Խաչատրյանին /Արսեն Մելքոնյանին/, Գոհար Պոստոլոկյանին, Դուշիկ Բաբաջանյանին և «Դիլիջան քաղաքի համար 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցների գույքահարկի և անշարժ գույքի հարկի պարտավորությունների նկատմամբ սահմանել արտոնություն՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 904-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով և համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարի 2017 թվականի հունվարի 30-ի թիվ 27-Ն հրամանի՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի սեփականության (ակտիվների և պարտավորությունների) 2024 թվականի պարտադիր գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն N 1-5 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 905-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Դիլիջան համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին:

2. Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Դիլիջան համայնքի 2025 թ. բյուջեից կատարել համապատասխան համաներդրումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 906-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ N 794-Ա ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 17 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 3–րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջան համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 15-ի «ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ենթակայությամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 794-Ա որոշման թիվ 17 հավելվածում ավելացնել նոր հաստիք /վարորդ, պաշտոնային դրույքաչափը 150 000 ՀՀ դրամ/ և հաստատել թիվ 17 հավելվածը նոր խմբագրությամբ /կցվում է/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից և տարածվում է 2025 թվականի ապրիլի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 907-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՌՈԲԵՐՏ ՉԱՊՈՒԽՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օր սահմանել 2025 թվականի ապրիլի 11-ին, ժամը 17-ին:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 908-Ա)*

Ավագանու անդամներ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ԲԱՋԻՆՅԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԱԼԻԽԱՆՅԱՆ

ԱՐՇԱԿ ԽԵՄՉՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ԳՈՒԼԻՆՅԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ԹԱԼԱՆՉՅԱՆ

ԱՐՏԱԿ ԲՈՋԻԿՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԱԻԼՅԱՆ

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Սոնա Եգանյանը

_____